ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 504 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 110-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի փետրվարի 10-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնների ընդլայնում» ծրագրի մասին» N 110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Բեսթ պրոջեքթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00891838) 2026 թվականի հուլիսի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արհեստական քարե պահարանի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 160,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ալումնիֆայր» ընկերության հետ (Alumnifire, Inc., Նյու Յորք, Ամերիկայի Միացյալ Նահանգներ) 2026 թվականի հուլիսի 10-ի հաշիվ-ապրանքագրով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի օգոստոսի 9-ից մինչև 2027 թվականի օգոստոսի 8-ն ընկած ժամանակահատվածում համակարգչային ծրագրի արտոնագրի ձեռքբերում՝ 6,250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Մաժդալանի» ընկերության հետ (Majdalani Engineering & Trading SAL LLC, Բեյրութ, Լիբանան) 2026 թվականի հուլիսի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի օգոստոսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում ինժեներական համակարգերի նախագծերի մշակման խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ 1,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Թիմ Էներջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00494167) 2026 թվականի հունիսի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2029 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում «Թումո Կողբ», «Թումո Կապան» և «Թումո Գյումրի» կենտրոնների համար էլեկտրական էներգիայի մատակարարում՝ ամսական 2,150,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ՖԲՌ մաստեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 08316539) 2026 թվականի հուլիսի 8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կեղտաջրերի մաքրման կայանի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում՝ 246,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

13.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ